«Ավետիս-Խեցի» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի՝ թիվ «ԼՄԱՀ-ՀԲՄԱԾՁԲ-23/7» ծածկագրով գնման պայմանագրի միակողմանի 19.11.2025թ. լուծումն անվավեր ճանաչելու և «Ավետիս-Խեցի» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ 28.11.2025թ. թիվ 1886-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, բավարարել:

Անվավեր ճանաչել 2023թ. հուլիսի 10-ին կնքված թիվ «ԼՄԱՀ-ՀԲՄԱԾՁԲ-23/7» ծածկագրով պայմանագրի ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի կողմից 2025թ. նոյեմբերի 19-ի միակողմանի լուծումը:

Անվավեր ճանաչել «Ավետիս-Խեցի» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու վերաբերյալ ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի 2025թ. նոյեմբերի 28-ի թիվ 1886-Ա որոշումը:

Դատարանի 2025թ. դեկտեմբերի 19-ի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը պահպանել մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

ՀՀ պետական բյուջեից «Ավետիս-Խեցի» ՍՊ ընկերությանը վերադարձնել 50,000.00 ՀՀ դրամ՝ որպես ավել վճարված պետական տուրքի գումար:

Դատական ծախսերի հարցը մնացած մասով համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Վճիռը կամովին չկատարվելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Դատավոր՝ **Գրիգորի Վարդանյան**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IE7F-0AB8-44E5-A1D0 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը:

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝